Ներսես Մշեցու մասին մեր տեղեկությունները շատ սակավաթիվ են և նրա դրական ու գիտական գործունեության մասին գրեթե ոչինչ չգիտենք։ Հայտնի է միայն, որ նա ծագումով Տարոնից է, Մուշ քաղաքից, սովորել է Ս. Առաքելոց վանքում, ապա Վարդան Արենյացու զբոսըքում և մահացել խոր ձերույթյան մեջ, Գյաձորում, որտեղ և թաղվել է 1284 թվին։

Որ Ներսես Մշեցին կյանքի վերջին տա-

րիները անց է կացրել Գյաձորում, այդ մասին վկայում է նրա տաշակերտ Մասնաձուլ երկեղեցու մաս պատկանված հետևյալ տեղեկությունը. «... յետ փոխման նորա (Վարդանի) ... նստալ յաթոռ նորին և լուսավառից զաղղս Հայոց ուսմամբ դրոց (ներսև) և հասնալ բարիոց ձերութեան հանգևալ ... ի նոյն վանս Գյաձորոյ»²։

Ինչպես տեսնում ենք, Ներսես Մշեցին իր վարդապետության վերջին տարիները անց է կացրել և մեռել է Հայաստանի կուլտուրական խոշորագույն օջախներից մեկում՝ Գյաձորում։ Այդ պատճառով էլ Գյաձորի բարձրագույն ուսումնական հաստատության համայնաբանի հիմնադրումը արդարացիորեն կապվում է Ներսես Մշեցու անվան և գործունեության հետ (1269/71—1284 թ. թ.)³։

Գյաձորը (անվանվել է նաև Գայաձոր, Գայեձոր, Գայիձոր, կամ թե Աղբերց վանք), որը բառացի թարգմանությամբ նշանակում է «Գայի ձոր», գտնվել է Պոռչյան իշխանների տիրապետության տակ Վալոց Ձորում։ Գյաձորի համայնաբանի պատմությունը նրա տեղագրությունը հետազոտողների համար մնացել է անհայտ։ Նրա հայտնաբերված հետքերը ոչ մի կերպ չեն համապատասխանում այդ համայնաբանի հոշակին։ Արդարացի է Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը կասկածելով, որ այն ավերակները, որոնք համարվում են Գյաձորի հետքերը, շատ աննշան են, և ոչ մի ընդհանուր բան չունեն նրա հետ։ Հասարակ, չհղիված քարերով կառուցված մի եկեղեցու ավերակներ են դրանք և հիմք չեն տալիս ենթադրելու, թե դրանք մնացորդներն են մի մեծ վանքի, ինչպիսին եղել է Գյաձորը։ Շրջապատում չկան վանքի ամրոցականության մնացորդները։

2. Գ. Ալիշան, «Սինական», Վենետիկ, 1893 թ., էջ 131։— Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքական կամ Պոռչյան», մասն Բ, էջ 191, մասն Գ, էջ 152 (տվելված Բ, 59) և է. Խաչիկյան, «Գյաձորյան համայնաբան և նրա սաների ավարտական առեղծոքությունները», Վ. Մ. Մուրադի տված Պետական համայնաբանի գիտական աշխատություններ, հատոր XXIII, Երևան, 1946 թ., էջ 426։

3. է. Խաչիկյան, «Գյաձորյան համայնաբան և նրա սաների ավարտական առեղծոքությունները», էջ 426։ Վարդան Արենյացու մահվան տարեթիվը հետազոտողների կողմից հաջորդուն չի որոշվում։ Աղբերաքույրների մի խմբի հիման վրա թվագրվում է 1269 (տե՛ս է. Խաչիկյանի նշված աշխատությունը, էջ 426), իսկ մի այլ խմբի տվյալներով՝ 1271 (տե՛ս Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանի, «Քաղաքական կամ Պոռչյան», մասն Բ, էջ 193)։ Այդ պատճառով Ներսես Մշեցու ինքնաբերական ուսուցչական գործունեությունը մեր կողմից նույնպես նշվում է այդ տարեթվերի հիման վրա։

որը առժամորաւ բազմացած է լինում եկեղեցիներից, դպրոցից, մատենադարանից, սեղանատներից, բաղամթիւ կաղարաններից և մի քանի յրաքայքի կառուցվածքներից: Կասկածանքն ափսիս է հաստատուում, երբ հարց է առաքանում, ինչ ինչու՞ նույն ժամանակի, կամ նույնիսկ դրանից առաջ կառուցված մշտն եկեղեցիների ու վանքերի մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը, ըստ որում ոչ միտ փրկուկում, իսկ Գյումրիի չի մնացել որեւէ հետք:

Երբ ժողի Ազրեւոյ վանքն և մականունն Գյումրու Այստեղից էլ յիշում է Ղ. Ալիշանի ենթադրութեանը այն մասին, թե Գյումրիի վանքը սկզբնապէս կոչվել է Ազրեւոյ վանք՝ Այս կապակցութեամբ հետաքրքրական է նշել, որ Գյումրին ժամանակակից «Պատմութիւն նախնային Սիսական» գրքի հեղինակ Ստեփանոս Սրբէլյանը այժմի տեղ չի հիշում այդ վանքի Գյումրի կամ Ազրեւոյ վանք անվանումները՝

Այնչիւք սղղակի և անսղղակի տվյալներ



ՔԱՆԱՑԻ ԿԱՄ ԴԱՐԱՆԻ ՎԱՆՔԸ

Գեւեւ իր ժամանակին Ղ. Ալիշանը նկատել է, որ Գյումրի, ըստ երեւոյթի, ունեցել է այլ անվանում: Այդ կասկածանքը հիմնոված է Մխիթար Սամեհոյ վրայութեան վրա, որը հաղորդում է. «Ի վանքն որ այժմ ասի Գյումրի: Իր ուրիշ գրչի մոտ, 1291 թիւ ձեռագրում, կայդում ենք. թի մենաստանո

րից մենք նանդեցինք այն եզրակացութեան, որ միջնադարյան Հայաստանի և հենց իրեն՝ Գյումրի համայնարանի պատմութեան այդքան կարեւոր հարցում խորապէս իրավացի է գիտնական ազգագրագետ երվանդ Լալայան:

Նույն աւելում:

«Պատմութիւն նախնային Սիսական», Բեֆի, 1910 թ.

4. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 130:

նր, Նրա «Վալոց ձոր կամ Դալարազյազ» աշխատության մեջ ասվում է, որ Օրթաքենդ գյուղից (այժմ՝ Գլաձոր) ղեպի հյուսիս-արևելք գտնվում է 13—14-րդ դարերում հայտնի Գալաձոր կամ Գլաձոր վանքը, որը հետադադարում սկսվեց անվանվել Ղարա-վանք⁷։ Այնուհետև Ե. Հալալյանի այդ նույն աշխատության մեջ նշվում է, որ Ղարա-վանքը միևնույն Քանաոթի վանքն է, որը կոտուցվել է 13-րդ դարում և որտեղ ամփոփված է եղել 135 թվին Մոզես գրությունը նահատակված Ստեփանոս Եպիսկոպոսի մարմինը⁸։

Այնուամենայնիվ, ինչև սկզբնաղբյուրների վրա է հենվել Ե. Հալալյանը նույնացնելով Գլաձորը Ղարա-վանքի հետ, մնում է անհայտ՝ ճիշտ է, Օրդույան պատմիչի մոտ հիշատակված է, որ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը դռնվել է մի կնոջ ձեռքով և խաղվել Քանաոթի վանքում⁹, սակայն դա բավական չէ Քանաոթ Գլաձորի հետ նույնացնելու համար։ Բայց գոյություն ունի մի վկայություն, որի շնորհիվ հնարավոր է որոշել Գլաձորի տեղագրությունը։ Այն պահպանվել է 1243—1284 թվականների մի հավաքածուի իշխանակալանում, որտեղ գրիչ Մատթևոս Կիրիկեցին գրում է.

«...նկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայ ձոր,
Հուպի շիրիմն Սինեցի,
Ի Աղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Լեռ ոտըս հար մեր Ներսէսի,
Եւ բարոնաց վարդապետի¹⁰,
Հասնալ ի ծայրս իմաստ րանի...»¹¹

Ուրված վկայությունից պարզ է, որ խոսքը վերաբերում է Աղբերց վանքին, այսինքն՝ Գլաձորին՝ օրհնագրի Աթէնս պանծալի¹²,

7. Ե. Հալալյան, «Շարուր-Դալարազյազի գավառ, Վալոց ձոր կամ Դալարազյազ»։ «Աղգաղրական հանդես», XII գիրք, 1904 թ., Թիֆլիս, 1905 թ., էջ 271։

8. Նույն տեղում, էջ 262։

9. «Պատմություն նահանգին Սիսական», գլ. VI և VIԲ։

10. «Բարեմաց վարդապետ» կամ Նաճախ «Վարդապետաց վարդապետ» սովորաբար կոչվել են այն մամանակվա ուսումնական հաստատությունների ղեկավարները։

11. 2. Հակոբոս Տալան, «Տուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վինենա», Վինենա, 1895 թ., էջ 1039։ 2. Ալիշան, «Սիսական», էջ 130։ Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Նաղարակյան կամ Պոռյանց Վալոց պատմության մեջ», մասն Բ, էջ 203—206։

12. Աղգալս ինն անվանում ժամանակակիցները Գլաձորի համալսարանը։

որի եկեղեցում էլ գտնվում է նահատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի գերեզմանը։ Այդ պատճառով էլ Գլաձորը հաճախ կոչվել է նաև «վանք» Գլաձոր II. Ստեփանոսի¹³։ Այսպիսով, ստացվում է, որ Քանաոթ (Ղարա-վանք) — Աղբերց վանքը նույն Գլաձորն է, ինչ որոշ, ոչ մի կասկած չի կարող, որ Քանաոթի վանքը Նեց ինքը՝ Գլաձորն է։ Համեմատելով Քանաոթի վանքի սահմանները որոշող տվյալները, կարելի է տեսնել, որ Նեց նույն այդ տվյալները վերաբերում են և՛ Գլաձորին։ Այսպես, Ղ. Ալիշանի մոտ ասվում է, որ Գլաձորը սահմանակից էր Նկեղյաց ձորին¹⁴։ Ըստ Օրդույանի, ինչպես և Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանի, Քանաոթ—Ղարա-վանքը նույնպես գտնվում է Նկեղյաց ձորին կից¹⁵։

Կա նաև մի ուրիշ, ոչ պակաս հետաքրքիր վկայություն։ Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը խոսելով Գլաձորի մասին, ցույց է տալիս, որ այն գտնվում է Սրկղունից Պոռ իշխանի դաստակերտից (որպարաոս) ոչ հեռու¹⁶, իսկ ըստ Ե. Հալալյանի այդ դաստակերտի մնացորդները գտնվում են Բաշքենդ գյուղի ծայրամասում (որը նույնացվում է Սրկղունիցի հետ)¹⁷, այսինքն, դարձյալ Քանաոթի վանքից ոչ հեռու¹⁸։ Քանաոթի վանքի ծաղկման ժամանակաշրջանը, նրա բուռն զործունեությունը, որի մասին մեզ պատմում են այդ վանքի վիճակի արձանագրությունները, նույնպես համընկնում են Գլաձորի համալսարանի գոյության ժամանակաշրջանին¹⁹։

Այժմ, երբ պարզ է, որ Գլաձորը և Քանաոթը, ըստ էության միևնույն վանքի տարրերն են վանումններն են, մեզ դարձանայի չի մնում այն երևույթը, որի առթիվ այնպես արդարացիորեն տարակուսում էր Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը։ Նաղարակյանը կամ

13. Այդ եպիսկոպոսի անվամբ կոչվում էր Քանաոթի վանքը, ավելի ճիշտ՝ վանքի եկեղեցին։ «Երեզնիս արքայի Ստեփանոսի», «Ս. Ստեփանոսի գերեզման» (տե՛ս Դարեգին արքեպիսկ. Հովսեփյան «Նաղարակյան կամ Պոռյանց», մասն Ա, էջ 130)։

14. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 130։

15. «Պատմություն նահանգին Սիսական», գլ. V, էջ 259։ Գ. արքեպիսկ. Հովսեփյան, «Նաղարակյան կամ Պոռյանց», մասն Ա, էջ 115։

16. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Նաղարակյան կամ Պոռյանց», մասն Բ, էջ 186։

17. Նույն տեղում, մասն Ա, էջ 115։

18. Ե. Հալալյան, «Շարուր-Դալարազյազի գավառ», էջ 270։

19. Տե՛ս «Материалы по археологии Кавказа», выпуск XIII, под редакцией П. С. Уварово и Х. И. Кучук-Иованнесона, Москва, 1916 г., стр. 134. — Գ. արքեպիսկ. Հովսեփյան, «Նաղարակյան կամ Պոռյանց», մասն Ա, էջ 173։

յունք հաշոց պատմությունն մեզ» աշխատության ը մասն ը մասում, Ռախատի վանքին նվիրված հաստիկ գլխում տպված է՝ «Համանակառակ ջանք համարում, սակայն, որ մի դարի Կենտրոնից մինչև մի-ի կեսերը արևադարձային մեծերով հարուստ մի վանքում, որ մեկը էն և առաջինը սխալագույն» ներ, այդքան ամուլ լինելը ձևագրական արվեստի կոպից²⁰ նվիրուք, մեկ չեն հասել ձևագրեր, բացառությամբ երկու—երեքի, որոնց մեկ նշված լինի, թե նրանք գրվել են Ռախատի վանքում: Նվ դա համանակի է, քանի որ այդ վանքի բազմաթիվ ձևագրերը վավերացված են նեղ իրեն համարարանի՝ Գյաթորի անվամբ:

Այսպիսով, այժմ մեկ հայտնի Ռախատի վանքը, կարելի է ասել, որ 13—14-րդ դարում, համարարանի դոյաթյան ժամանակաշրջանում (նաև հաղագայում) նայուն է մեկ Գյաթոր կամ Աղբից վանք անուններով:

Մենք նախկին վանքի կարծիքով, որ Գյաթորի նախնային և իմնական անվանումը եղել է ոչ թե Աղբից վանք, ինչպես մեխագրել է Ղ. Ալիշանը, այլ Ռախատի վանք:

Ռախատի վանքին կից, զեն մինչև համարարանի իմնագրումը, եղել է կրոնամիտների միարանություն, ծագել է հոգիար-կույտության կյանքը, և այդ վանքը հանդիսացել է ոչ պակաս հայտնի հոգիար կենտրոն, որն իր եղբայրության կողմից տվել է մի դիտակալ, որին ժամանակակիցները անվանել են ամանողի փոխառություն²¹:

Համարարանն էլ իր նոր՝ Գյաթոր անվանումն ստացավ ներսեն Մշեցու վարդապետության օրոք: Այդ անվանումը, մեր կարծիքով, կապված չէ միայն Գյաթոր տեղանքի հետ, որից ոչ հետո դուրսում է Ռախատի վանքը: Ահա, ինչպես երևում է, ծագում է Տարնում²² դուրսում Մուշի Ս. Առաքելոց վանքին կից միևնույն անունը կրող դպրոցից, որտեղ ներսեն Մշեցին ստացել է իր սկզբնական կրթությունը²³: Այլ կերպ ասած համարարանի անվանումը բերվել է Առաքել վարդապետի հետ իր նայունի երկիր Տարնումից:

²⁰ Գորեգին արեղիսի, Հովսեփյան, «Նաղարայան» կամ Պաղյանք, մասն ը, էջ 173:

²¹ «Փոխառություն» բառը նայինք մաս, միևնույնում, իր իմնական իմաստից բացի, կարող էր նշանակել նաև երգիչ, երգիչ (տե՛ս Գորեգին արեղիսի, Հովսեփյան, «Նաղարայան» կամ Պաղյանք հայոց պատմության մեջ, մասն ը, էջ 159):

²² Այդ առիթով մեք Ն. Ներսես Սարգիսյանի մաս, «Տեղագրություն» ի Փարս և ի Մեծ Հայոց աշխատության մեջ (Կենտրոն, 1861 թ., էջ 236), կարգում ենք: «Մենաստան Առաքելոց կոչի և Գյաթոր վանք, թեև վանի խորհուրդից ձևային որ ի յայն (մենաստանին)»:

²³ Ղ. Ալիշան, «Միտակալ», էջ 131:

Համարարանի արտադր, շատ հնարավոր է, առաջնահարար ամրապնդող Գյաթորի առաջատար դիրքը Ռախատի վանքում, որը և, ինչպես երևում է, արտահայտվել նրանով, որ նրա տնային տարածվել նաև ամրոց Ռախատի վանքի վրա, կոչվելով Գյաթորի վանք: Ռախատի վանքը, որի անվան տակ այդքան երկար ժամանակ թափված էր՝ Գյաթորի հնագույն համարարանի, իր ժամանակին հանդիսացել է երկրի խոշորագույն կույտություն կենտրոններից մեկը²⁴:

Այդ մեծությունը իր վարա-վանք անվանումն ստացել է բավականին ուշ, 19-րդ դարում, տեղական (աղբիցյանական) աղբարանկալության կողմից, որը և բառացի խորամանկությամբ նշանակում է «Մեկ վանք» Գորեգին արեղիսի, Հովսեփյանի այդ անվանումը երկուցու մի քանի դուրսից, որը ժամանակի լրիվացումը բացառվում են է դարձել, առաջացած իր համարում, ինչպես այդ անում են Ղ. Ալիշանը, և Լալայանը և արիշները²⁵, Գորեգին արեղիսի, Հովսեփյանի կարծիքով վաղա-վանք ոչ այլ ինչ է, եթե ոչ ինչ Գորեգին (այսինքն բարից կատարված վանք) անվանման աղավաղում²⁶: Այս կարծիքը արդարանալու որոշ իմքեր ունի, քանի որ նման անվանման հանդիպում ենք Ստեփանոս Որբելյանի պատմության մեջ²⁷, որի վրա էլ հենվում է Գորեգին արեղիսի պատմությունը:

Ռախատի վանքը իմնագրվել է 7—8-րդ դարերում, Այդ ժամանակվա վանքից ոչինչ չի պահպանվել, և այժմ տեղում միայն նեղերն ու ձևացողներ կան մի եկեղեցու, որն իր կառուցվել է 1273 թվին Պաղյան խանի և նրա որդիների կողմից, որպես մե-

²⁴ Տեղին է նշել, որ մի շարք նաղարայանների, սկսած Ղ. Ալիշանից, չգիտեցին (և նայունն մի վանք (Ռախատ), որը գտնվել է Որբելյան ինչ-ինչեր տեղանքի վրա, Տեղինք մի բնի հետև, որը և Ստեփանոս Որբելյան պատմելի կողմից ինչ-ինչերն ու վանքերի թվարկման մեջ ինչպես է առաջիններից մեկը Տեղին վանքից հետո Որբելյանը իր գրքի մեջ վայր-ձորի Ռախատ վանքը հիշատակում է Հերման վանքից հետո (տե՛ս նրա «Պատմություն հայկական Միտակալ», գլ. 48, էջ 335, 340, ինչպես և Ղ. Ալիշան, «Միտակալ», էջ 119, Բ. Խ. Հովսեփյան, «Հայաստանի պատմական աշխարհագրություն», գրքի 2-րդ, երկուս, 1932 թ., էջ 145 և արիշները):

²⁵ Ղ. Ալիշան, «Միտակալ», էջ 119: և Լալայան, «Տարր-Գյաթորագրի գաղա», էջ 267: — «Материалы по археологии Кавказа», выпуск XI (II, стр. 125 և արիշները):

²⁶ Գորեգին արեղիսի, Հովսեփյան, «Նաղարայան» կամ Պաղյանք, մասն ը, էջ 113:

²⁷ «Պատմություն հայկական Միտակալ», գլ. 5, էջ 239:

նասան Ս. Ստեփանոսի և իրենց առժամայնա Պոռ իշխանի հիշատակը նավերժացնելու համար, իսկ եկեղեցուն կցված գանգակատունը (հուսիսային կողմից) թվագրված է 1279 թ.²⁸, նրան է նաև մի ուրիշ, երրորդ կառուցվածք հարավային կողմից, որից մնացել են միայն աննշան շեղքեր²⁹, Մեր կարծիքով, եկեղեցին կառուցված է նրան, ավելի վաղ, 1250—1260 թվականներին³⁰:

Զիմանալով Գլաձորի ճիշտ տեղագրությունը, հնարավոր չէ որոշել համալսարանի նկատմամբ ունեցած նաև Պոռլյան իշխանների նվաճավորությունը քննությամբ³¹, Մի շարք ձեռագրերից հայտնի է, որ Պոռլյան իշխանները եղել են Գլաձորի համալսարանի նվաճավորները, իսկ 1328 թվի մի ձեռագրի հիշատակարանում Պոռլյանները անվանված են «տէր և իշխեցող սուրբ մենարանիս և տանս դպրոցական ժողովուրդ»³²:

Անկասկած, Թանատի վանքը և Գլաձորի համալսարանը տնտեսական մեծ օգնություն են ստացել ինչպես իրենց անմիջական հովանավորներից, այնպես և այլ անձնավորություններից: Զե՛ որ համալսարանը առանց նրաթական օգնության չէր կարող պահել այդքան մեծ թվով սաներ: Եվ, իրոք, ինչպես երևում է Ս. Ստեփանոսի եկեղեցու և դանդաղակատան պատերին եղած ար-

ձանագրություններից³³, Թանատ-Գլաձորյան վանքը ուներ ընդարձակ ռդային տարածություններ, նվիրարնողները հանդիսանում էին գլխավորապես Պոռլյան տոհմի անդամները, նշանավոր Պոռ իշխանի որդիներն ու թոռները: Քացի Պոռլյաններից նվիրարձրում էին նաև Սյրելյանները և ուրիշները, նվիրատվությունը վանքի օգտին, լինպես երևում է արձանագրություններից, բավական մեծ է եղել, Թանատ-Գլաձորի վանքին նվիրվել են վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ, կալվածներ, սմառանոցներ և այլն, ինչպես այդ տվյալարար արվել է խոշոր վանքերի նկատմամբ, հատկապես մոնղոլական տիրապետության ժամանակ: Այդ նվիրատվություններից րացի վանքը ապահովվում էր դրամով (ոսկով): Տաճարի սպասավորները դրա փոխարեն պարտավոր էին նվիրատուների համար պատարագ մատուցել:

Հողերի շահագործումն ու դրամական նվերները, հավանարար, ապահովել են համալսարանի բաղամթիվ սաների ու վանքի միարանության ծախսերը:

Պարզելով Գլաձորի ճիշտ տեղագրությունը, շնորհիվ Թանատի վանքի վիճակի ճոխ ու առատ արձանագրությունների, մեր առաջ բացվում է այդ նշանավոր կուլուրական-հոգևոր կենտրոնի տնտեսական կյանքի պատկերը: Գլաձորի համալսարանը, անկասկած, պետք է դրավի հայ ժողովրդի անցյալի դպրոցական կյանքը հետազոտողների ուշադրությունը:

Հատկապես Գլաձորի համալսարանում սկսեց իր գործունեությունը վարդան Արենյացու դպրոցը՝ ներսես Մշեցու գլխավորությամբ, որը մինչ այդ թափառում էր հայրենի երկրում և մշտական հանգրվան չէր գտնում:



Գլաձորի վանքը սովորական վանքերի նման չէր, ինչպես օրինակ Կեյառիսը, Գեղարդը (Ալբիվանքը) և ուրիշները, որտեղ նույնպես տնեցել ան վարդապետներ ու աշակերտներ, այլ հանդիսացել է րարձրադուր ուսումնական հաստատություն—համալսարան:

28. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանր կամ Պոռլյաներ», մասն Ա, էջ 118:

29. Նույն տեղում, էջ 124:

30. Ի միջի այլոց եկեղեցու թվագրման լարցք կարող է մանրագրեն ստուգման, որովհետև եղած տեղեկությունները բացահայտ հակասական են: Եթե վանքը կառուցված լիներ 1273 թվին, ի՛նչով բացատրել այդ նրա պատերին գտնվող ավելի վաղ շրջանի արձանագրությունները, որտեղ գայիս են 1251 թվից հետոս: Այդ արձանագրություններն էլ, մեր կարծիքով, իրենց քննյթով հաստատում են, որ նրանք ոչ մի կերպ չեն կարող գրված լինել նետաղա շրջանում: Այդ պատճառով էլ մենք ճիշտ չենք համարում մի շարք հեղինակների պնդումներն այն մասին, որ Ս. Ստեփանոսի եկեղեցին կառուցված է եղել 1273 թվին (տե՛ս Փաթըրունի, «Ճանապարհորդական նկատողութիւնք», «Արարատս ամսագիր», 1889 թ., փետրվար, Վաղարշապատ, էջ 102:—«Материалы по археологии Кавказа», выпуск XIII, стр. 126.—Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանր կամ Պոռլյաներ», մասն Ա, էջ 117 և ուրիշները):

31. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանր կամ Պոռլյաներ», մասն Բ, էջ 196:

32. Նույն տեղում, էջ 197:—Տե՛ս և մասն Ա, էջ 199—200 և մասն Գ, հովելված Բ, 21, ինչպես և Ղ. Ալիշան, «Ախապան», էջ 133:

33. Ղ. Ալիշան, «Ախապան», էջ 90—205 («Ելայոց կամ Նղեգեաց ձոր»):—Ե. Լալայան, «Ելայոց ձոր» (նշանավոր վանքեր), «Ողջագրական շանդես», XXVI դիրք, 1916 թ., Թիֆլիս, 1917 թ.:—Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Խաղրակյանր կամ Պոռլյաներ» հատոր Գ:—«Материалы по археологии Кавказа», выпуск XIII և ուրիշները:

Ամենահին տեղեկությունը Գրաձորի Համայնության մասին գտնում ենք 1286 թվականի մի ձեռագրի մեջ, որի պատվիրատուն եղել է աճարտատանն մեծ Ներսէսը Մէյն տեղ մի նմաթյալական գրութուն կապելուամտ ուղիս Սասնի Հեանոց և աշակերտսը, ամենն Աձյ Ներս. վրի.³⁴, ավելացված

Ներսես Մշեցու գրչակից աշակերտ Սասնի Նշեցու ձեռագր, սյուր փոխաբերիկի ֆր ասույց չին և կանգնեց Համայնությանի գրութս Սասնի Նշեցու որոր Գրաձորս լայն Հոյակ էր ձեռք բերել:

Սասնի Նշեցին ծաղմամբ Սասունից էր,



ԿՈՐԱՆ ԵՍԼԱԿ ԵՉԵՑՈՒ ԱՍՏՎԱԾԱՆԵՐԵՐԻՑ
ՆԿԱՐԱՅԻ ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱԳԻ, ՎԱՅՐԻ ԴԱՅՈՐ, 1318 թ.

(Հայկ. ՍՍԻՐ ՊԵՏ. մասեն. ձեռ. N 206. ք. 139ր)

34. Հայկական ՍՍԻՐ ՊԵՏ. մասեն. ձեռ. N 1111, ք. 8ր:

Ձեռքի է նիշ ավանդու մերա ձեռնդյան ճիշտ թվականը հայտնի չէ. բայց մի շարք վկայությունների շրման վրա կարելի է ենթա-

գրարար այն նշանակել մոտավորապես 1248—1253 թվականներին³⁵։

Եսայի Նշեցին սկզբնական շրջանում սովորել է վարդան Արենկցու մոտ, իսկ նրա մահից հետո շարունակել է ուսումը Ներսես Մշեցու մոտ։ Եսայի Նշեցին մեռել է խոր ծերության մեջ, մոտավորապես 95—90 տարեկան հասակում, 1338 թվին³⁶։

Ներսես Մշեցու մահից հետո, 1284 թվին, Եսայի Նշեցին Գլաձորի համալսարանի ղեկավարությունն իր ձեռքն է առնում և շատ բազմաթիվ գործունեություն ծավալում մինչև իր կյանքի վերջին տարիները, գրելով 55 տարի։ Նրա օրոք Գլաձորյան վարդապետարանը գիտական մտքի կենտրոն դարձավ, ձեռք բերելով մեծ փառք ու համբավ։

Այն մասին, թե որքան հռչակված է եղել Գլաձորի համալսարանը, վկայում են ժամանակակիցների կարծիքները։ Այսպես՝ Մատթեոս Կիլիկեցի գրելը 1284 թվին այն անվանում է «երկրորդ Աթենք պանծալի», Տիրատուր Կիլիկեցին 1302 թվին կոչում է «մեծ դպրատուն», Մխիթար Երզնկացին 1314 թվին գրում է՝ «մայրն իմաստից Գլաձոր», Հակոբ Բագրդցին 1318 թվին անվանում է՝ «մայրաքաղաք ամենայն իմաստից», իսկ Կյուրեղ գրելը 1321 թվին հայտնում է՝ «հռչակաւոր, սուրբ մենաստան համալսարան» և այլն։

Շատ հետաքրքրական է նաև ժամանակակիցների վկայությունը համալսարանի ուսուցչապետների մասին, Ներսես Մշեցի վարդապետին անվանել են «մեծ հոգևոր», «ամենագով վարդապետ», «արդիւնակատար վարդապետ»։ Եսայի Նշեցու մասին արտահայտվել են ոչ պակաս գովեստներով, այսպես նրան անվանել են՝ «անյազթ հոգևոր», հոգեհանճար, գերիմաստ բարունապետ և հայր հոգևոր», «քաղցրահանճար փիլիսոփայ և բանիրուն... տիեզերալոյս բարունապետ», «մեծ բարունապետ բոլոր Հայաստանեայց», կամ թե՛ «լուսավոր այր Աստուծոյ», «մեծ սովիստոս», իսկ Ստեփանոս Օրբելյան պատմիչը նրան անվանել է «դիսուսական համալսարանացն պետ», «դպրապետ անճառ դպրոցացն», «համակ գիւան անհասական խորոցն»։

35. Լ. Խաչիկյան, «Գլաձորյան համալսարանը և նրա տաների ավարտական ատենախոսությունները», էջ 426—427։

36. Ղ. Ալիշան, «Մխիթար», էջ 131։ Ըստ Միքայի Համդեցու՝ Եսայի Նշեցին մեռել է 1342 թվին (Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքային կամ Պոռչանք», մասն Բ, էջ 379)։ Մ. Օրմանյանի մոտ Նշեցու մահը նշանակված է 1333 թվին (Մաղարիտ արքեպիսկ. Օրմանյան, «Ազգագրատուն», Կոստանդնուպոլիս, 1912 թ., մասն Բ, էջ 1800)։

Իսկ համալսարանի ղեկավարության գծով Եսայի Նշեցու մերձավոր օգնական Դավիթ վարդապետին անվանել են «նախնին Դավթ» և այլն։ Եվ իրոք, ընթացիկ վերամրադ արտահայտություններին, համալսարանի հիմնադիրներ Ներսես Մշեցին և Հատկապես Եսայի Նշեցին եղել են իրենց դարաշրջանի խոշորագույն գեղագետներ, Համալսարանի ղեկավար Եսայի Նշեցու մեծությամբ և բարձր հեղինակության վառ ապացույց կարող է ծառայել թեկուզ հենց այն փաստը, որ իշխաններին, կաթողիկոսներին, եպիսկոպոսներին հետ միասին նրա անունը ևս անցել է պատմության ժամանակագրության մեջ³⁷։

Եսայի Նշեցին խոշորագույն գիտնական էր. նա տիրապետում էր մի շարք լեզուներին, հրաշալի ուսումնասիրել էր հին հունական հեղինակներին՝ Արիստոտելին, Պլատոնին և տրիշներին։

Եսայի Նշեցու երկարամյա գործունեությունը, ինչպես նշել է Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը³⁸, ընդգրկում է հետևյալ բնադավառները՝ կրոնական-եկեղեցական, մանկավարժական և դիտական-գրական։

Եսայի Նշեցու կրոնական-եկեղեցական գործունեությունը սերտորեն կապված է եղել կաթողիկոսների՝ ռուսթոռ-ների (միարարեն-րի) շարժման դեմ մղվող պայքարին, որը ուժեղ կերպով հանդես եկավ Կիլիկիայում 13-րդ դարի վերջերից, իսկ 14-րդ դարի 20-ական թվականներին ծավալվեց նաև Մեծ Հայքում։

Հոգևորականությունը հարկադրված էր բացահայտ պայքար մղել ոչ միայն ունիթոսականության դուրս անցած կաթողիկեպիսկոպոսների ու իշխանների դեմ, այլ նաև ամեն կերպ ձգտում էր ժողովրդին նախազգուշացնել ունիթոսականության ահարկող վտանգից։ Նրկրում քարոզում էին կաթողիկե հոգևորականները, որոնք ավելի ակտիվ գործունեության համար իրենց հենակետը՝ կաթողիկական արքեպիսկոպոսության աթոռախիստ Սուլթանիայից (Իրան) փոխադրել էին ավելի մոտ հայերին՝ Նախ-ճավան (Նախիջևան) քաղաքը³⁹, Ժողովրդին սպառնացող վտանգը շատ մեծ էր, կաթողիկոսության դեմ մղվող զաղափարական պայքարը համախմբեց Գլաձորի համալսարանը Եսայի Նշեցու գլխավորությամբ, Ստեփանոս Օրբելյանի, Դավթի, Մխիթար Ասանեցու և

37. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Քաղաքային», նր կամ Պոռչանք», մասն Բ, էջ 301։

38. Նույն տեղում, էջ 209։

39. Մ. արքեպիսկ. Օրմանյան, «Ազգագրատուն», մասն Բ, էջ 1800—1801։

ուրիշ այն նշանավոր գիտնականների մասնակցությամբ:

Հատկապես մեք ընդ հարսն ի պոխս իշանեւ և ո՛ր ընդ հասմոսը՝ չերկինս ելանելու: Հայաարարում էր Սահփառնու Որբիւյան պատմիրը⁴¹:

Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը միտն-
գամայն իրաւագիւ է, երբ Ստալի Նոյնցու և
նրա համալսարանի գործունեութիւնը կա-
պում է ունիթոսութեան զեւմ մղվող պայքա-
րի հետ: Գործարի համալսարանի զերք կա-
թոլիկութեան զեւմ մղվող պայքարում մեծ է
եղիւ և միաժամանակ շատ կարեւոր նշանա-
կութիւն է ունեցիլ հայկական կուլտուրայի
անկախութեան ու ինքնուրույնութեան պահ-
պանման գործում:

Քշեամու պողոտաբախտութեան զեւմ մղ-
վող պայքարում բազմական չէր հենվել միայն
կրօնական սկզբունքների վրա, այլ հարկա-
վոր էր զինվել պայքարի այն նորագոյն մի-
ջոցներով, որոնք օգտագործում էր հակա-
ոսկորդը, այսինքն՝ փոխտոփայութեամբ,
բնական գիտութիւններով և այլն: Այդ առ-
պարհվում Ստալի Նոյնցու և նրա համալսա-
րանի կուլտարում աշխատանքը նշանակալից
էր: Հետագայում, Ստալի Նոյնցու մահից հե-
տո, այդ պայքարը հաղորդեցաւ շարունա-
կեցին Հովհան Որոտնեցին իր աշակերտ
Գրիգոր Տաթևացու հետ:

Ստալի Նոյնցու գիտական-գրողական գործու-
նեւթիւնը սերտորեն կապված էր ինչպես
հեղեղեցական, այնպես էլ դպրոցական կյանքի
հետ: Նա զրկել է բազմաթիւ աշխատու-
թիւններ աստվածաբանական-փոխտոփայա-
կան րովանդակութեամբ⁴²: Այդ աշխատու-
թիւնները մեծ մասամբ հաճախական բնույթ
ունեն, որոնց պարտնական նյութերը այժմ
էլ կարեւոր արժեք են ներկայացնում ոչ միայն
Հոսիական և ասորական այն սկզբնաղբյուր-
ներն ու թարգմանութիւններն են, որոնց
բնագրերի մի մասը կորած են: Այսպես,
զրինակ, Հովհան Ոսկերեանի և Կյուրեղ
Աղբաւանդաբանի մի շարք աշխատութիւն-
ները փրկվել և գիտութեան են ժառանգվել
շնորհիւ պահպանված Ստալի Նոյնցու թարգ-

մանութիւնների⁴³: Այդ աշխատութիւննե-
րում հիշատակվում են նաեւ աշխարհի հեղի-
նակների անուններ, որոնք մինչև այժմ էլ
հայտնի չեն պատմական, ինչպիսիք են՝ Հի-
սպիոսը, Պոլիկրոնոսը և ուրիշները:

Ստալի Նոյնցու աշխատութիւնները, թեև
աստվածաբանական-փոխտոփայական բնույթ
ունեն, բայց բազմական հետաքրքրութիւն են
ներկայացնում մի քանի տեսակների փե-
րատրուղ այն նյութերով, որոնց մեջ կան մի
շարք տեղումներ ու բացատրութիւններ
հայաարարութեան, տմբայնքի, գործի-
նքի, զինքի, հաղատանքի, ժողովրդա-
կան հաճատարների փերարկայաւ և այլն:

Ստալի Նոյնցին հակալական նշանակու-
թիւն էր տալիս նաեւ կուլտուր. բազարական
ակտիւ գործիւներ պատրաստելու գործին,
որոնց պահանջն աշխարհ սուր տնհրամշ-
տութիւն էր երկրի համար մոնղոլական տի-
րապետութեան ծանր տարիներին:

Խարդիկ իրենց հողերը հարավը հաղեց-
նելու համար Գլաձորի համալսարան էին
գալիս ու միայն բուն Հայաստանի տարրեր
ծայրերից, այլ նաեւ հեռավոր Կիլիկիան հայ-
կական թագաւորութիւնից:

Գլաձորի համալսարանում, կամ ինչպես
համայն այն անվանվել է՝ «հայոց դպրոց»-ում
ունենր տարրեր գիտութիւնների դժով ու-
սանել ևն 6—12 տարի:

Այն մասին, թե հատկապես ի՞նչ առար-
կաներ են ավանդվել Գլաձորի համալսա-
րանում, չկան որոշակի տվյալներ: Սակայն
Տաթևի բարձրագոյն դպրոցի մասին եղած
տեղեկութիւններից կարելի է պատկերա-
ցում կազմել, թե ինչ առարկաներ են օ-
վանդվել Գլաձորի համալսարանում: Հայտ-
նի է, որ Տաթևի բարձրագոյն դպրոցը հան-
դիսացել է Գլաձորի համալսարանի ժառան-
գորդը, հետեւաբար կարելի է ենթադրել, որ
համալսարանը Գլաձորից փոխադրվելու հետ
միասին Տաթևի բարձրագոյն դպրոցը մա-
ռանդած պետք է լինի ուսման այն դասըն-
թացը, որը ավանդում էր Գլաձորի համա-
լսարանում:

Տաթևի համալսարանում աստվածաբա-
նութիւնից բացի ավանդվել են նաեւ փոխտո-
փայութիւն, բնագիտութիւն, մաթեմատի-
կա, տիեզերագիտութիւն, բժշկութիւն, անա-
տոմիա, պատմութիւն, ճարտասանութիւն և
այլ առարկաներ:

Գլաձորում ծաղկել է նաեւ նկարչութիւնը,
որն անխղիճորեն կապված էր դրութեան

40. Այսինքն՝ Հոսիական եկեղեցու կողմնակիցների հետ:

41. Գարեգին արքեպիսկ. Հովսեփյան, «Եկեղեցական կամ Պոչյանք», մասն Գ, էջ 186:

42. «Մեկնութիւն Աղեկիլի մարգարէի», «Մեկնութիւն բերեւեթի», «Գիտնական Արքեպիսկոպոս. բազար. համալսարանի լուծմունք», «Լուծմունք Ստալի մարգարէութեան», «Բան վան կարգաց եկեղեցւոյ և ժամապաթեան», բազմաթիւ շտաբ, համակներ, ուղերձներ և այլն:

43. Հազմազում այդ աշխատութիւնները հայտնա-
բերել է Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանը 1917 թվին
հոսիս երա «Եկեղեցական կամ Պոչյանք», մասն Բ,
էջ 269, ինչպես և «Արարատ. ամսագիր», 1917 թ.,
էջ 193):

արվեստի հետևողական և հատուկ պահպանողական արհեստանոցները Ձեռագրերի հիշատակարաններում մի շարք վկայություններ կան այն մասին, որ այս կամ այն նկարիչը սովորել է այսինչ վարպետի մոտ: Այսպես, 1334 թվի մի ձեռագրում (Հայկական ՈՍԽ Պետ. մատեն.-ի ձեռ. № 1379) նշված է, որ Լուրու Տարոնացի նկարչի մոտ սովորել են Հովհաննես և Գրիգորիս, իսկ 1334—1335 թվականների մի ձեռագրի (Հայկական ՈՍԽ Պետ. մատեն.-ի ձեռ. № 6230) հիշատակարանից հայտնի է, որ Քրիստոս Դանրա՛յայտ այդ վարպետի աշակերտն է եղել նշանավոր մանրանկարիչ Ավագր: Բայց անցյալի ո՛չ բոլոր նկարիչներն են կարողացել նման ակադեմիական բնույթի դպրոց անցնել: Դատվելով դեպքերում նրանք հաճախ սգովել են պատահական օրինակներից, ավելի փորձված րեկերների պատահական ցուցումներից:

Համայնարան վարորդաց հետո ոտա՛նող»-ները գրել են դիտական աշխատանքներ, պաշտպանության ներկայացրել «ավարտական ատենախոսություն»-ներ: Նախքան պաշտպանությունը նրանք պարտավոր էին քննություն հանձնել գիտնական կրոնավորներից կազմված հատուկ հանձնաժողովի առաջ, որից հետո նրանց շնորհվում էր «վարդապետ»-ի գիտական աստիճան և իրավունք էին ստանում ստղծոսել, վարդապետել և յայտնել գրանս աստուածայինս, ի լեզուս խոսել և թարգմանությունս տունել առ ի շինություն եղբարց և ի կատարումն եկեղեցւոյս⁴⁴: Փյաժորի համայնարանի ուսումնական դրվածքի բարձր միճակի մասին վկայում են ուսանողների գրած ավարտական ատենախոսությունները: Դրանք, ճիշտ է, գլխավորապես քարոզներ են եղել (օրինակ, «Ահեղ դատաստանի մասին» և այլն), բայց, ընայած կրոնական թեմատիկային, այդ աշխատությունները գրված են բնութի, պեղարվեստական բարձր ոճով ու լեզվով, որտեղ նույնիսկ ամենավերացական զաղափարներն ու մտքերը շարադրված են կոնկրետ ու իրական դույններով, շրջապատող կյանքից վերցված օրինակներով և անբողոք անհրճելի մտածված բնության նկարագրություններով:

Փյաժորի համայնարանում յուրջ ուշադրություն է դարձվել սաների բարոյական պատրաստականության վրա: Նրանց հաղորդվել

է Լեռագրերի ու գրավիշ քարոզի հմտություններ: Այդ նպատակով գրվել են հոգվածներ ու շարադրություններ, քանի որ գիտակցել են, որ լավ քարոզը լավ հակահարված է կաթոլիկությանը:

Ավարտական ատենախոսությունների մի այլ տարրերի առանձնահատկությունն այն էր, որ այնտեղ նկատվում է մեծ սեր պնդի «փիլիսոփայական» խորհրդածությունները: Այսպես, մի այդպիսի աշխատության մեջ այն ժամանակվա գիտական դիրքերից ելնելով Լեռագրերի ձեռով բնութագրվում է «արվեստ» հասկացողությունը, ճիշտ նույն ձևով, ինչպես այն գրված է Դիոնիսիոս Թրակացու մոտ: «Արտեստ է գումարում հաւաքման յառաջակիրք արանց, զոր պտեալ և կրթնալ փորձիլ թուլին այնոցիկ, որ զկնի զալոց էին, վասն պիտանացու ինչ իրաց և կարեաց աշխարհայնոց»⁴⁵: Իմաստն այստեղ այն է, ինչպես բացատրում է Ն. Այդուցը, որ արվեստը ծագում և զարգանում է կուտակված գիտելիքների սերնդից-սերունդ փոխանցման ճանապարհով:

Քիչ չեն եսել իր ժամանակի համար առաջավոր՝ բնության և կենդանի աշխարհի բազմազանության պատկերները բացատրող մտքերն ու օրինակները: «Արար աստուած պերկինս և զհրեշտակս, զլոյս և զերկիր և զշուր և զհուր և զաւր, և են արարածք մեծամեծք և զլիաւորագոյնք, իսկ այլ արարածք ծայրք են և ծնունդք ի սոցանէլ յառաջ եկեալք և շարախառնալք ի պանազան կերպս և ի տեսակս, որպէս հուր, զի ծնալով է լուսոյ և ցուցիչ բնութեան նորա, զի առանց հրոյ ոչ երևի. և երկիր ծնալով է շրոյ և աւուր և պատճառ գոյացութեան նոցա...»⁴⁶:

Փյաժորում, ինչպես և լուսավորության մոտ կենտրոններում, ինչպես գրում է Վալերիյ Բրյուսովը, «գրվել են և՛ գիտական շարադրություններ, կատարվել են թարգմանություններ հին լեզուներից... Նադուլի նուշարձանների համար ծանոթագրություններ են կազմվել, անցյալի նշանալի ստեղծագործություններ են արտադրվել, քնդհանուր առմամբ, գրական կյանքը չի մնել, ընայած արտաքին բազմաթիվ հարվածներին, ապացուցելով, որ կենդանի է եղել նաև ժողովրդի ոգին»⁴⁷:

Իսայի Նշեցու ղեկավարության օրոք միայն Փյաժորի համայնարանում սովորել,

44. Մեղերումը քաղված է Լ. Խաչիկյանի «Փյաժորյան համայնարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները», էջ 43 (տե՛ս «Գիրք զասպան սալոյ աշակերտացն ճշմարիտ բանի... յօրինեալ որոշն Գրիգորի Տաթևացւոյ», «Մայրոց ձեռնագրություն», Վաղարշապատ, 1876 թ., էջ 111):

45. Н. Адонц. «Дионисий Фракийский и армянские толкователи», Петроград, 1915 г., стр. СХХІІІ—СХХІV.

46. Լ. Խաչիկյան, «Փյաժորյան համայնարանը», էջ 449:

47. Валерий Брюсов. «Летопись исторических судеб армянского народа», Ереван, 1940 г., стр. 110.

«վարդապետ»-ի գիտական կոչում են ուսուցիչ և եկեղեցական-քաղաքագետն ու գիտական-գրական առարկայի են մտել 360-ից ավելի մարդ:

Համալսարանը ավելի է մի շարք նշանավոր մտածողներ, բանաստեղծներ, մանկավարժներ, գրիչներ ու նկարիչներ և այլն, ինչպես են Հովհանն Որոտնեցին (Տաթև), Տիրատուր Կիլիկեցին (Հերմոն), Ախիթար Սահնեցին (Լիճուփա վանք) և ուրիշները: Գլաձորում են կատարելագործվել Ստեփանոս Սրբեյան պատմիչը, բանաստեղծ փիլիսոփա Հովհաննես Որբնեցին, բանաստեղծ Խոջատուր Կեչառեցին և ուրիշները: Վերջապես այս համալսարանի անվան հետ է կապվում, ինչպես ենթադրում են, միջնադարյան հայ պոեզիայի պարծանք Ֆրիկի սուրունը: Ընդ են հասել նաև մանրանկարչության մի շարք գլուխգործոցներ, որոնք պատկանում են նշանավոր վարպետներ Լիմիկի, Պորոս Տարոնացու և շատ ուրիշների վրձինին:

Գլաձորի համալսարանի գործունեությունը տևել է մոտ 65—70 տարի, բայց նրա գործունեության դադարեցմամբ կանգ չի առել նրա սկսած գործը: Քաղաքական-տնտես-


ական տերարենպաստ պայմանների հետևանքով Հովհանն Որոտնեցու կողմից տեղափոխվելով Տաթևի վանքը, համալսարանը շարունակել և առաջ է տարել Գլաձորի «հայոց գաղութ»-ի փառավոր ավանդները:

Հայ ժողովրդի կույտության ինքնուրույնությունը պաշտպանելու և հետագա զարգացումն ապահովելու պատմական անհրաժեշտությամբ է պայմանավորված Գլաձորի համալսարանի գործունեությունը:

Գլաձորի համալսարանի և նրա տրամափոր մտածողորդ Տաթևի գաղութի դադարական հիմքերի և բարոյական աղղկություն շնորհիվ ապահովվեց հայկանակը Հայաստանը վաղիկանին ենթարկելու դեմ մղվող պայքարում⁴⁰:

Գլաձորի համալսարանը հայկական կույտության պատմության մեջ հատուկ տեղ է զբաղում: Իր նշանակությամբ և հնությամբ այն կանգնում է համաշխարհային հանրահայտի համալսարանների շարքում:

40. Տե՛ս պրոֆ. Ն. Աղանջի լողվածք Գարեգին արքեպիսկոպոսի Հովհաննիսյանի «Խոջապետ» կամ Պատշաճ... աշխատության Գ մասում, էջ 49:





1. ԱՄԱՏՈՒՆԻ

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

(Մահվան 100-ամյակի նախօրյակին)



Եսրոպ Թաղիադյանը ծնվել է 1803 թվին Նրեանում, Մանուկ հասակից զրկվելով հորից, որպեսզի երեսան մնում է տատի մոտ, ապա 1816 թվին Նրան տանում են Էջմիածին և Ներսես կաթողիկոսի կարգադրությամբ Ղանձնում քուրդ անվանի Հովհաննես վարդապետին, որպեսզի գրագիտություն սովորեցնի փոքրիկ Մեսրոպին։ Նա սովորում է կարգալ սաղմոս, ժամագիրք, շարական։

Նույն թվականին Էջմիածին է գալիս Հայտնի Հայագետ Պողոս վարդապետ Ղաթաղցին, որի մոտ ուրիշ զպիրների և ուսուցիչների հետ Մեսրոպը սկսում է ուսանել գրարար քերականություն, որ այն ժամանակ ամենարարժք գիտությունն էր համարվում։ Լեյնուհետև նա պարապում է կոնդակներ գրելով և հին ձևադրեր արտադրելով։ 1821 թվին Մեսրոպին տալիս են զպրության շորս աստիճան և ձեռնադրում սարկավագ։ 1822 թվին ուսումը շարունակելու նպատակով նա ցանկանում է մեկնել Փարիզ, բայց պարսից պատերազմի պատճառով փոխում է ճանապարհը և ուղևորվում Հնդկաստան, ուր մի ժամանակ ապրում է Դաքա քաղաքում Երուսաղեմի Լերրահամ վարդապետի մոտ։ Մեսրոպի խնդրանքով վարդապետը միջնորդում է, որպեսզի նա անգլիացի Ռիչնալդ Հիրը ևպիսկոպոսի ճեմարանում անգլերեն սովորի, Եպիսկոպոսը սիրով հանձն է առնում և կրթության ծախսն էլ վերցնում իր վրա։ Այնուհետև այդ եպիսկոպոսը որպես կանոն երկու հայ սովորողի ընդունում է անգլիական հոգևոր ճեմարանում և ձրի կրթություն տալիս նրանց։ 1826 թվին մանկւով ճեմարան

նա այնտեղ մնաց մինչև 1830 թվականը և անգլերենից հայերեն թարգմանեց Հիրը ևպիսկոպոսի «Դիցարանություն» և «Պաղեստին» գրքերը, որոնք տպագրվեցին 1830 թվականին։

1831 թվին Թաղիադյանը թողնելով ճեմարանը մեկնում է Պարսկաստան և Նոր-Ջուղայի հայոց ուսումնարանում գրադվում ուսուցչությամբ։ 1833 թվին հրավիրվում է Էջմիածին որպես ուսուցիչ և միաժամանակ վարում Հովհաննես կաթողիկոսի քարտուղարի պաշտոնը։ Սակայն մեկ տարի չանցած Ջուղայի լինակության խնդրանքով կրկին վերադառնում է Նոր-Ջուղա և նշանակվում ուսուցիչ։ 1835 թվին նա մեկնում է Ռափրիկ և նշանակվում արքայազն Մելիք-Ղասում Միրզայի անգլերենի դաստատու։ 1838 թվին Թաղիադյանը նորից վերադառնում է Էջմիածին և ապա այնտեղից տեղեկանում Կոստանդնուպոլիս։ Պոլսում մի տարի հաղիվ մնալուց հետո, մեղադրվում է իրեն բողոքական (նա կապեր ուներ ամերիկացի միսիոներների հետ), ենթարկվում է հալածանքի, Կոստանդնուպոլսից փախչելով կրկին ուղևորվում է Հնդկաստան, ճանապարհին գերի է ընկնում արաբների ձեռքը, տարվում Լեյվիայի անապատը, որտեղից մի կերպ ազատվելով ընկնում է Հնդկաստան և ապաստան գտնում Կալկաթայի անգլիական ճեմարանում։ Կալկաթայում նա տպագրության է հանձնում «Պատմություն հին Հրեականության» գիրքը։ Շուտով հայ վաճառականները Թաղիադյանի աշակցությամբ հիմնում են «Լեւորատյան ընկերություն»-ը, որի նպատակն էր լրագիր հրատարակելով բարձրացնել տեղական ազգաբնակչության մտավոր ու կուլտուրական մակարդակը։

ապագային յոյժոր տարբերությունները: Եվ Սոնդիպին թողնում է իր հայրենի Հնդկաստանն ու Սոսի հետ միասին փախչում Հայաստան: Այստեղ Վարդավառի տոնի ժամանակ Սոնդիպին հայ աղջիկների հետ դաշտերում ծաղիկներ էր քաղում, երբ վրա է հասնում հայրը՝ ուռջա Սարաջը, հափշտակում նրան և դռնում կոտորեցին:

Սոսի և Սոնդիպիի դժբախտ սիրո պատմությունը վրա կառուցված պոեմը բաղկացած է 5 մասից: Նախերգանքում Սոսի Սոնդիպին դերկամանի վրա ընկած ողբում է իր կորցրած սերը: Աստղիկը հարցնում է Սոսին նրա լացի պատճառը: Սոսի ասում է իր և Սոնդիպիի սիրո պատմությունը, որ նկարագրված է մնացած երգերի մեջ:

Ոչ միայն լեզվով, այլև կառուցվածքի անհնազանդակություններով պոեմը հորինված է դասական դրամեքսերի հետևությամբ:

Պաշտպանելով դրամարը՝ Թադիագյանն ունեցված է աշխարհիկ րոմանտիկությամբ երկու վեպ՝ «Վեպ Վարդգեսի» և «Վեպ Վարդանանի»: Սրանք ժամանակակից և պատմական վեպեր չեն: Այն, ինչ որ պատմում է լեզվակալը Տուհաց իշխան Վարդգեսի, Երվանդ թագավորի և նրա դեմ ըմբոստացող հախարարների, Արմավիր քաղաքի մասին և այլն, պատմական հեղելություն չէ: Այդ վեպերը չեն առնված հայ հայտնի հին վեպերից: Ինչ որ կա այդտեղ հին հայկական վեպից՝ «Հատուած գնացնալ» փոքրիկ կտորն է, որ բերում է հորեկացին իր պատմության մեջ: Այսպիսով Վարդգեսի ամբողջ վեպը Թադիագյանի երևակայության արդյունքն է: Նրա մեջ հեղինակը պատմում է, թե Հայաստանի հին քաղաք Արմավիրի պարիսպների տակ մի պատանի, Վարդգես անունով, շրջում էր անտառի և անապատում: Այդ ժամանակ նրանում են քաղաքի վրա սարսափ տարածող ավազակները և պանդուխտ պատանին միանում է նրանց, դառնում հայտնի ավազակապետ՝ Արեղին անունով: Բայց Վարդգեսն ավազակ է դառնում՝ ավազակությունը ոչնչացնելու նպատակով: Իր սիրադրություններով Վարդգեսն ազատում է իրվանդ արքային դավադիր իշխաններից և ամուսնանալով թագավորի քրոջ՝ Հայկանդուխտի հետ դառնում է մեծ նահանգների իշխան և կառուցում է Վարդես ավանը: Վեպում արտահայտված է հեղինակի հասարակական իդեալը, որը քաղ, հավատարիմ, թագավորին ծառայող իշխանի իդեալն էր:

«Վեպ Վարդանան»-ի րոմանտիկությունը հետևյալն է: Աղվանից թագավոր Վաչագանը սովորություն ուներ ծաղկած շրջելու քաղաքը և լսելու իր ժողովրդի խոսակցությունները: Մի գիշեր նա լսում է Գուրգենի խոսակցու-

թյունը՝ որ ինքը կուզենար ամուսնանալ թագավորի աղջկա հետ, եթե նույնիսկ ոճիտ շտապ թագավորը և վեպեր նրան երկրից: Մյուս սրը թագավորը կատարում է Գուրգենի ցանկությունը, Գուրգենը և վարսենիկը ամուսնանում են և վտարվում Աղվանից: Իրենց քաղաքից մեռու նրանց հաստատվում են ապրելու: Գուրգենը մշակություն է անում, վարսենիկը պրագվում է ձեռագործով: Այսպես էր ու դառն նրանց կյանքը, բայց երջանիկ էին: Գուրգենը դավադիր անապատորոշություններից և առասպելական, դիվական որոգայթներից հետո իրենց հերոսությունը ու քաջությունը հասնում են իշխանական փառքի:


Փոքր չէ վեպի գաղափարը: Նրա հերոսությունը՝ աղվանից թագավորի աղջիկ Վարսենիկը համաձայնում է մի աղքատ մարդու հետ ամուսնանալ, թողնել իր հոր թագավորական ապարանքը և նվիրվել իր ամուսնուն աշխատանքով և աստվածասիրությամբ:

Չնդիսկը Վարսենիկի առասպելական անհավատությունն մեջ տվել է խելոր, համեռ, աշխատանքի տանտիկնուր կերպարը: Կնոջ այս իդեալը դրված է Աստուծո, իշխանի և եկեղեցու ղեկավարության ու հովանավորության տակ, առանց որի նա չի կարող կյանքում որևէ հաջողություն ունենալ:


Վեպում հայրապետը և թագավորը կարևոր տեղ են բռնում: Հայրապետը հարգված է, ներկայացված է որպես բարձր անհավատություն, որի իշխանությունն առավել բարձրացնում են տիկինն ու օրիորդը՝ թագուհին և իշխանուհին, Մյուս կողմից թագավորը, իմաստուն է, խելոր և լավ կառավարող:

Թադիագյանի սիրային քանաստեղծություններն ու պոեմները նվիրված են իր կնոջը՝ Թանկում խաթունին, որին մեծարում է նա և որի անժամանակ մահը ողբում է անմխիթար: Այդ քանաստեղծությունները, որ գրված են գրարար լեզվով, խոսում են Աստուծո, երկերի, Քրիստոսի, խաչի, արարչության, տաճարի և այլ րազմաթիվ բարեպաշտական նյութերի մասին, որոնց միջոցով նա ուղղում է րարձրացնել իր սիրածին, նրան տույ աստվածային շնորհ:

Թադիագյանի քանաստեղծությունների մեջ կան էջեր, որոնք գրված են պարզ, հասարակ տրվեստով, հասկանալի գրարարով կամ դավառական րարարով: Նրանց մեջ երևան են դարձյա ժամանակակից կյանքի հետուրքերրական կողմերը, րանաստեղծի վերաբերմունքը դեպի կյանքի ու կենցաղի խրեդիրները, ղեղչկական կյանքի ու աշխատանքի և նրա հերոսի պարզ նկարագրությունը, որոնք մնաու են կեղծ-դասական դրականու-



ՀԱՐԵՇ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ Ա. ԵՎԱՍՏԱԹԵՆՈՍԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ



Երբեքները պատմական ասպարեզ են նկել շատ հին ժամանակներից, բայց մենք շունենք ոչ այդ ժողովրդի հնագույն շրջանի ստույգ պատմությունը և ոչ էլ ճիշտ պատկերացում նրա անցած ուղու մասին։ Սակայն նրա պատմական անցյալի մասին եղած կցկտուր տեղեկությունները Հարեշատանի պատմությամբ հետաքրքրվողներին բերում են այն եզրակացության, որ այդ երկիրը հեռավոր անցյալում սերտորեն կապված է եղել իր ժամանակի քաղաքակիրթ երկրների՝ Սրբանիկ Արարիայի, Սեդիստուսի և ապա հունա-հռոմեական աշխարհի ու կուլտուրայի հետ։ Նա անհամեմատ ավելի յարձր կուլտուրա է ունեցել Թուրքիայի իր շրջապատի համեմատությամբ։

Կարմիր ծովը, շնայած նավարկության համար իր խիստ անբարենպաստ պայմաններին, զեռ շատ հին դարերում առևտրական աշխույժ կապերի կիսմուրջ է հանդիսացել Ճեղհաստանի, Պարսից ծոցի, Սեդիստուսի, ապա նաև հունա-հռոմեական աշխարհի միջև։ Այդ ծովային ճանապարհի նշանակությունն այնքան մեծ է եղել հին աշխարհի առևտրական հարաբերությունների մեջ, որ զեռ փարավոնների ժամանակ Կարմիր ծովն արդեն չբանցքով միացվել էր Նեղոս գետի հետ։ Պտղությունների ժամանակ այդ ջրանցքը վերստին նորոգվեց և Կարմիր ծովը Նեղոսի վրայով կապվեց Միջերկրական ծովի հետ։ Ու նորից դարձավ բանակ ճանապարհ։

Սակայն այդ բանուկ ճանապարհը բնական մեծ անհարմարություններ ունի։ Ծովը ինչ էր վտանգավոր խութերով, իսկ խութերից ավելի վտանգավոր էին անտառնային եղանակի և ստորջրյա շարժումն ավազը, որը հաճախ փակում էր նավերի ճանապարհը։ Այս վտանգների դեմ պայքարելու համար փայտավոնները հանգրվաններ էին կառուցում ծովի երկու ափերին։ Այդ հանգրվաններն ապա-

հով դարձնելով նավարկությունը միաժամանակ կապ էին պահպանում իրենց շրջապատի ցամաքի հետ, դառնում նրանց համար կուլտուրական Սեդիստուսի նայող պատահաններ, ժամանակի ընթացքում հանգրվանները դարձան քաղաքներ, շարժման մեջ գրեթե նրանք երկրների ընակիչներին, նրանց համախմբիչներ իրենց շուրջը և վերածվեցին առանձին թագավորությունների։ Այսպիսով Կարմիր ծովի արևելյան ափին ստեղծվեցին Մինայի, Սարայի, Քաթարանի և Հադրամաուդի, իսկ արևմտյան ափին՝ Նուբիայի, Մերոյի (Նարաթ) և Աքսումի թագավորությունները։ Հույները և հռոմեացիները շարունակեցին իրենց կապն այդ հանգրվան։ Թագավորությունների հետ, սրանց թագավորներն իրենք էին ղեկավարում երկրի առևտուրը շուկա հանելով համեմունքներ, փղոսկր, ռակի, խունկ, զմուռ, թանկագին փայտ, վայրի դադաններ, մորթիներ և խափշիկ ստրուկները։ Նրանք առևտրական կապ էին պահպանում ոչ միայն Սեդիստուսի, այլև Կարմիր հետ և գերում հսկայական նարստություն։ Աստվածաշունչը պատմում է Սարայի թագուհու մասին, որը թանկագին նվերներ էր ուղարկում Հրեյից Սողոմոն իմաստուն թագավորին։ Այդ թագավորությունները, սկսած մեր թվականությունից հազար (մերկա ավելի) տարիներ առաջ մինչև իսլամի երևան գալը, ժամանակ առ ժամանակ յարձրանում և քակնում էին՝ ղերիշխանությունը գիշերով մերթ մեկին, մերթ մյուսին։

Կարմիր ծովի հարավարևմտյան ափին աճեց ու զարգացավ հանգրվան-քաղաքներից մեկը՝ Ադուլիսը։ Սակայն նրան չվիճակվեց իր հարակից երկրի իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքում։ Այդ բանի համար ավելի զորեղ մրցակից հանդիսացավ հարևան Աքսումը քաղաքը, որը նավահանգիստ չէր, բայց ցամաքային ճանապարհների կարևոր հանգույց էր։ Աքսումի վրայով էր անցնում

հորացրել էր իր ամուսնական ու թուղարակտն նշանակությունը: Հարկչության պատմության ծանրությունը կենտրոնը փոխադրվել էր լեռնաշխարհը: Անգամ նկեղեցու պես՝ առանձնահատուկ, լինելով սրբազան, քաղաքը, փոխադրվել էր լեռնաշխարհի բազմաթիվ մեկը՝ Կոնդորը:

Այդ խառն շրջանում, 10-րդ դարի կեսերին, ճուղաշրջափան ֆուդալաներին հաջողվում է գրավել Արսում բազարը, կործանել այն և կոտորել Մուգոմենյան հարստության ուսն անդամներին: Ըստ ավանդության նրանցից միայն մեկին է հաջողվում փախչել հոս և ախտից շարունակել իր ասե՛մը: Փառչողների իշխանությունը տևում է 70 տարի, որից հետո հոստա նախնայի տերերը՝ գազվենները, գրավում են Արսումը և իրենց վերապահում Հարեշատան նկուս: Նեղեղախի տիրապետը Այս գազվենների տնից է քրիստոնյա թագավոր բարեպաշտ Լայրայան, սրբ գրավում է Հարեշատան օրերի շարքը:

Ըստ ավանդության, Լայրայան, զիտ թագավոր չգործած, սիրում էր զնայ տնագետները, հնչել ու աղոթել: Թագավոր գառնալով նա շատ բարակուս փախեր է կանգնեցնում, որոնց կատուցման համար բերում է նգիպոտից փախած ապրաակամորթ վարպետներ: Լայրայան երկրի յա՛վաղույն հողերը նվիրում է այդ վանքերին ու առնաստակ Հարեշատան նկեղեցուն, և մեծապես նպաստում նկեղեցու ուժեղացմանը: Նրա թաղարակնության հսկասկզբունքը շատ են պայքարում Լայրայանի քրիստոնեացան զործունեության դեմ և, վերջ ի վերջս, թուխավորելով միացնում են նրան: Լայրայանի թագավորությունը, թեև սատյգ պարզված չեն նրա դա՛ր բարձրանալու և մահվան թվականները, դուրադիպում է հուշակրաղ արշավանքների խառն շրջանին:

Լայրայան Հարեշատան այն նշանավոր թագավորն էր, որը փորձում էր վերջ տալ ալատական իշխանների աճող կենտրոնականության, ըլախի թաղարակնությանը և սերսկապ հաստատել նկեղեցու հետ, ուժեղացնել այդ կայր, որովհետև միակ կենտոնակ ու՛ժը, որի իշխանությունը տարածվում էր բովանդակ Հարեշատանի վրա, նկեղեցին էր: Նրա այդ բաղադրականությունը հաջանակ տարավ 1264 թվականին, երբ Հարեշատան նշանավոր կրոնական գործիչ Թախյա-Հայմանովի ջանքերով, Հարեշատան նկեղեցու աջակցությամբ, հաջողվեց դա՛ր բարձրացնել նույնի քրիստոնյա իշխան Իկուն-Ամյակին, որը նկեղեցու մեկնածուն էր և նկեղեցու վերաբերմամբ շարունակեց Լայրայանի թագարակնությունը:

Իկուն-Ամյակն է՛լ, սովելի ուժեղացրեց նկեղեցին, նրան նվիրելով հարստոր հաստա հաղեր, նկեղեցին իր հերթին Իկուն-Ամյակին հաղեցիկ Մուգոմենյան տո՛ւմի շուրափից և նրանով սկսվում գինաստիան նվիրագործեց որպես Մուգոմենյան գինաստիան:

Յնարոջ է, որ Հարեշատան նկեղեցուն նվիրված քրիստոնյա գինաստիայի հաղանակը տեղի ունեցավ խաշակուղ արշավանքների դարաշրջանում:

Յեկ ընդունված է առել, որ Հարեշատան բարձրվին մեկուսացված էր արտաքին աշխարհից, որ մոտալրմոնական նգիպատոր նրան կուրել էր Մերձավոր Արևելքից ու եվրասիայից, բայց նորից համաշխարհային պատմության շրջադարձային իրադարձությունները որոշ արձապետք էին զտնում այդ երկրում:

Իկուն-Ամյակի հիմնադրած նոր քրիստոնեական Մուգոմենյան գինաստիան իր գոթության համար պայքար է սկսում հեթանոսական և մուսուլմանական շրջապատի դեմ:

Մուգոմենյան հարստության ներկայացուցիչներին չհաջողվեց ստեղծել կենտրոնական ուժեղ իշխանություն: Արսումը մնում էր որպես սրբազան, նվիրական թագար, այնտեղ էր դրոնվում հարեշների տմենագիտավոր նկեղեցին: Սակայն ո՛չ թագավորը և ո՛չ կրոնապետը չէին նստում այնտեղ, Հարեշ թագավորների համար դարևր շարունակ տրադիցիոն օրենք դարձավ լեռնաշխարհում աստանդակտն կյանք վարելը և անմատչելի ու անառիկ բնական բերդերում ժամանակ առ ժամանակ լուսնաստանալը: Նրանք թագավոր դառնալուց հետո, սրբաբործված սովորություններ, լեռներից իջնում էին Արսում թագար, այնտեղ մայր տաճարում ծծվում նեղուս-նեղեղի և այդ տիրողոսով (տաճար միայն տիրողոսով) գինված, նորից անցնում լեռները: Լեռներն ավելի ապահով էին դաշտավայրային Արսումից:

Հարեշատանում արտաքին աշխարհի հետ կապը պահպանվում էր դիսավորապես նկեղեցու միջոցով: Հարեշական քրիստոնեական նկեղեցին ինքնուրույն կազմակերպություն չունեւր: Թեև ըստ ավանդության Հարեշական դարձր կապված է նավարեկության հետեանով Հարեշատան ընկած հույն բարեպաշտ վաճառականի՝ Ֆրումենտիոսի անվան հետ (319 թ.), թեև Հարեշատանում քրիստոնեության տարածման գործում վճռական դեր են խաղացել Արսումի ինն Լրանելիները, որոնք, ըստ ավանդության, եկել էին Արեւելքից՝ Սիրիա—Պաղեստինից, բայց և այնպես Հարեշական նկեղեցին հետոց առտի կազմակերպորեն կապված է եղել նգիպատ-

սի Ղպտիական նկեղեցու հետ, և իր կրոնական (արտոնա) դրամական որոշ պարզի տալով ստացել է ղպտիկների պատրիարքից՝ Ամեն անգամ, երբ վախճանվում էր արտոնան, հարեշական նեղուս-նեղեշաին պատվիրակություն էր ուղարկում Ողիպոսոս՝ Ալեքսանդրիա և ղպտիկների կրոնականը նոր արտոն էր ուղարկում Հարեշատան, Արտոնաները միշտ Էղեյ են ղպտի և հաճախ չեն իմացել տեղական լեզուն (ավելի ճիշտ՝ լեզուները, Հարեշատանում խոսակցական լեզուները Էղեյ են ամհարեներ, տիգրինիս և տիգրե ցեղակից լեզուները և այլն, իսկ կրոնականը պահպանություն և նկեղեցու լեզուն Էղեյ է գեղեցիկներ, որ թարգմանարար նշանակում է բերովի, ներմուծված լեզու և աղղակից է հարավային տարրերին)։ Նշանակում էր, ուղարկված ղպտի արտոնան ունենում էր իր տեղապատի՝ լեզի, որն արդեն հարեշ էր և ընտրվում էր նեղուս-նեղեշաին կողմից։

Այսպիսով, Հարեշական նկեղեցին կուլմակերպորեն կապված էր Ալեքսանդրիայի պատրիարքական աթոռի հետ, իսկ տեղական հայկական Հայք վանքի կուլտուրական մեծ գործունեություն շնորհիվ (բավական է ասել, որ ակադեմիկոս Տուրանի վկայությամբ հայկական վանքի հայերից Գևորգն է, որն «Տիրամոր փառարանություն», որ համարվում է ղեկը լեզվի ամենափայլուն գոհարը, տե՛ս ակադ. Ս. Մ. Տուրան, «Эфиопские рукописи в Петербурге», 1918), ինչպես նաև ղեպի նրուստընդ կատարվող ուխտագնացությունների հետևանքով (իսկ հարեշ աշխարհիկ և հողերական ուխտավորները որպես մեարնակներ հյուրընկալվում էին միայն նրուստընդի հայկական Ս. Հակոբ վանքում), Հարեշ նկեղեցին առնչվում էր Հայոց նկեղեցու հետ, անվերապահորեն ընդունելով վերջինիս կարևոր դերը արևելյան միտրեակ եկեղեցիների մեջ։

